ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1957 Общественные науки

Ա. Հակոբյան

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Սովետական Միության աշխատավորները հպարտությամբ ու հրճվանքով նշում են Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-րդ տարեդարձը։ Այդ փառապանծ տոնը մեծ խանդավառությամբ նշում են նաև սոցիալիստական լագերի բոլոր երկրների աշխատավորները, ամբողջ աշխարհի առաջավոր մարդկությունը։

Ընդգծելով Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի մեծագույն նշանակությունը, Վ. Ի. Լենինը գրում է. «Այսուհետև նոր շրջան է սկսվում Ռուսաստանի պատմության մեջ, և տվյալ երրորդ ռուսական ռևոլյուցիան վերջին հաշվով պետք է հասցնի սոցիալիզմի հաղթանակին»[1]։

Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակը մեր երկրի աշխատավորները դիմավորում են այն ժամանակաշրջանում, երբ արդեն իրականացված է Վ. Ի. Լենինի այդ հանճարեղ կանխատեսությունը։

Եթե ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր, ապա Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի և երկրում տեղի ունեցած արմատական փոփոխությունների շնորհիվ Սովետական Միությունը դարձավ այն երկիրը, որը աշխարհի բոլոր ժողովուրդներին օրինակ է ցույց տալիս ազատության, ժողովուրդների իրավահավասարության և եղբայրական համագործակցության ասպարեզում։ Սովետական Միությունը խաղաղության դրոշակակիրն է, բոլոր ճնշված ու ազատասեր ժողովուրդների հույսը։

Կործանելով շահագործողների տիրապետությունը, Հոկտեմբերյան ռևոլյուցիան Ռուսաստանում ոչնչացրեց նաև ազգային անհավասարությունը և երկրի բոլոր ժողովուրդների համար քաղաքական, տնտեսական ու կուլտուրական բարգավաճման ամենալայն հեռանկարներ բաց արեց։

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայից անմիջապես հետո, 1917 թ. նոյեմբերի 15-ին հրապարակված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան» հռչակեց Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների նոր կյանքի հիմնական սկզբունքները։ Այն վերացրեց ազգային-կրոնական բոլոր և ամեն տեսակի արտոնություններն ու սահմանափակումները, լիկվիդացրեց ազգային ճնշումը Ռուսաստանում և լայն հեռանկարներ բաց արեց նախկինում ճնշված ժողովուրդների, ինչպես նաև հայ ժողովրդի առջև։ Համաշխարհային պատմական այդ փաստաթղթի ընդունումը և անշեղ կենսագործումը խոշորագույն նշանակություն ունեցան ճնշված ժողովուրդների համար, որոնք խանդավառությամբ ընդունեցին այն։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի անմիջական ազդեցությամբ ինչպես Ռուսաստանի ազգային բոլոր շրջաններում ու

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 26, էջ 284։

ծայրամասերում, նույնպես և Անդրկովկասում լայն ծավալ ստացավ ռևոլյուցիոն շարժումը։ Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, համախմբելով իրենց մարտական շարքերը, ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ հերոսական պայքարի դուրս եկան Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Անդրկովկասում իրականացնելու, իրենց ազատությունն ու անկախությունը ձեռք բերելու համար։ Ինչպես ասված է ՍՄԿՊ Կենտկոմի պրոպագանդայի ու ագիտացիայի բաժնի և ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի թեզիսներում, «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ծնունդ տուավ ու հաղթանակեց որպես աշխատավորների հզոր, ցասումնալից բողոքը ընդդեմ Ռուսաստանը ապետի եզրին հասցրած իմպերիալիստական պատերազմի, ընդդեմ շահագործող դասակարգերի՝ կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետության, ընդդեմ ազգային ճնշման»։

Սակայն Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում գոյություն ունեին մի շարք լուրջ դժվարություններ և խոչընդոտներ, որոնց հետևանքով այստեղ այդ պայքարը ընդունեց ավելի սուր և ավելի երկարատև բնույթ։

Երբ Ռուսաստանում հաղթանակեց պրոլետարական ռևոլյուցիան, այդ տարիներին Անդրկովկասում իշխանության գլուխ կանգնեցին բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները՝ սկզբում հանձին Անդրկովկասի կոմիսարիատի և Անդրկովկասի Սեյմի, իսկ հետո՝ ազգային «անկախ» կառավարությունների։ Մոլեգին կերպով ձգտելով բոլոր միջոցներով Ռուսաստանում ձախողել սոցիալիստական ռևոլյուցիան, Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները և բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերը իրենց առջև խնդիր էին դրել Անդրկովկասն անջատել Սովետական Ռուսաստանից, այն դարձնել օտարերկրյա իմպերիալիստների գաղութ և պայքարի բազա ընդդեմ Ռուսաստանի սոցիալիստական պետության։ Այդ նպատակով նրանք մի կողմից Անդրկովկասի դռները բաց էին արել օտարերկրյա զավթիչների՝ նախ գերմանա-թուրքական, ապա ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների առաջ, մյուս կողմից, ձգտելով Անդրկովկասի ժողովուրդներին անջատել միմյանցից, նրանց մեջ սերմանելով նացիոնալիզմ ու շովինիզմ, հրահրում էին եղբայրասպան պատերազմներ, դասակարգային պայքարը սքողում ազգային դրոշակներով ու պաճուճանքներով։

Նման պայմաններում Անդրկովկասի բոլշևիկների առջև լուրջ ու դժվարին խնդիրներ էին դրված՝ ինտերնացիոնալիստական հետևողական քաղաքականությամբ սոցիալիստական ռևոլյուցիայի դրոշի շուրջը համախմբել երկրամասի բոլոր ժողովուրդների աշխատավորներին, մինչև վերջ և անողոքաբար մերկացնել ու ջախջախել բուրժուա-նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն ուժերը, Անդրկովկասում հաստատել սովետական կարգեր։

Տնտեսական թույլ զարգացման հետևանքով, ինչպես ամբողջ Անդրկովկասում, նույնպես և Հայաստանում, Ռուսաստանի համեմատությամբ, ավելի պակաս էր պրոլետարիատը, որը նույնպես որոշ դժվարություններ էր ստեղծում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղվող պայքարում։ Ինչպես նշված է «ՍՍՌՄ-ում քաղաքացիական կռիվների պատմություն» աշխա-

տության 2-րդ հատորում, պրոլետարական կարգերի պակասը չէր կարող իր հերթին չանդրադառնալ բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի վրա։ Այդ դժվարությունները, սակայն, հաղթահարվում են Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների՝ Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի բոլշևիկների կողմից։

Այնուհետև, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների՝ դաշնակների, մենշևիկների, մուսավաթիստների և մյուս թափթփուկների քաղաքականության հետևանքով կենտրոնի համեմատությամբ Անդրկովկասում ավելի ուժեղ էր օտարերկրյա իմպերիալիստների ճնշումը։

Հաստատվելով Անդրկովկասում, ամերիկյան-անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստները նյութական, քաղաքական և ռազմական միջոցներով օգնում էին դաշնակների, մենշևիկների ու մուսավաթիստների մարիոնետային կառավարություններին երկրամասում ամենակատաղի կերպով ճնշելու բանվորների ու գյուղացիների պայքարը Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման համար։ Օտարերկրյա իմպերիալիստների այդ օգնության հետևանքով Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին հաջողվում է որոշ ժամանակ պահպանել իրենց իշխանությունը, որը, սակայն, հաստատուն չեղավ։ Հակառակ ամեն տեսակի հալածանքներին ու ճնշումներին, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ երկրամասում բարձրանում էր ռևոլյուցիոն շարժումը հանուն Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի։

1917 թ. դեկտեմբերի 16-ին Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի նիստում քննարկվում է Կովկասում ստեղծված դրության հարցը։ Դրանից երկու օր հետո, դեկտեմբերի 18-ին, ընդունվում է ժողկոմսովետի դեկրետը Ստ. Շահումյանին Կովկասի Գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար նշանակելու մասին։ Անցնելով իր պարտականությունների կատարմանը, Ստ. Շահումյանը մարտական կոչ է ուղղում Կովկասի բանվորներին, զինվորներին և գյուղացիներին՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ շարունակել հերոսական պայքարը Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը Կովկասում ապահովելու համար։

1917 թ. դեկտեմբերի 31-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը հրապարակում է «Թուրքահայաստանի» մասին դեկրետը, որով արևմտահայերին տրվում է լիակատար անկախության և ազատ ինքնորոշման իրավունք։ Այդ իրավունքի իրականացման համար դեկրետով նախատեսվում էին մի շարք նրաշխիքներ՝ թուրքական և ռուսական զորքերի հեռացում Արևմտյան Հայաստանից, ներքին կարգ ու կանոնն ապահովելու համար հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպում, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանից Թուրքիայի խորքերը արտաքսված և փախստական հայերի վերադարձը Արևմտյան Հայաստան և այլն։ Համաձայն այդ դեկրետի, Սովետական Ռուսաստանն իր զորքերը ետ քաշեց Արևմտյան Հայաստանից, ուր նրանք մտել էին համաշխարհային պատերազմի ժամանակ։

Հայ ժողովուրդը մեծ գոհունակությամբ ընդունեց «Թուրքահայաստանի» մասին դեկրետը։ Սակայն օտարերկրյա իմպերիալիստների հարձակումը Ռու-

[1] Տե՛ս History гражданской войны в СССР, том 2, 1937, стр. 113.

սաստանի ու Անդրկովկասի վրա և Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից արգելակեցին այդ դեկրետի իրականացումը։

Կենսագործելով Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի, պարտիայի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի ցուցումները, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Վրաստանի ու Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների հետ միասին, բոլշևիկների ղեկավարությամբ ծավալուն պայքար սկսեցին հանուն սովետական կարգերի, ընդդեմ դաշնակների, մենշևիկների, մուսավաթիստների և մյուս բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերի, ընդդեմ օտարերկրյա զավթիչների։

Անդրկովկասում Սովետական իշխանության համար ծավալված պայքարը հանդիպում է ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերի կատաղի դիմադրության։ Նրանք ստեղծում են կոնտրռևոլյուցիոն ուժերի կոալիցիա։ Այդ կոալիցիայի արտահայտությունը հանդիսացավ 1917 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում մենշևիկների, էսեռների, մուսավաթիստների ու դաշնակների ներկայացուցիչներից կազմված կոնտրռևոլյուցիոն կառավարությունը՝ Անդրկովկասյան կոմիսարիատը։ Այդ կոմիսարիատի հրամանով 1918 թ. հունվարին Շամխոր կայարանի մոտ զինված բանդաները ավազակային հարձակում են գործում Թուրքական ռազմաճակատից Ռուսաստան վերադարձող զինվորների վրա, ջինաթափում են նրանց և կոտորում հազարավոր ռևոլյուցիոն զինվորների։

Կենսագործելով Վ. Ի. Լենինի ցուցումները, Ստ. Շահումյանի, Մ. Ազիզբեկովի, Ա. Ջափարիձեի ղեկավարությամբ Բաքվի պրոլետարիատը շարունակում է համառ ու հերոսական պայքար ներքին և արտաքին թշնամիների դեմ։ 1918 թ. մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը Բաքվում տեղի են ունենում բաղաքացիական կռիվներ, որին երկու կողմից մասնակցում էին ավելի քան 20 հազար մարդ[1]։ Այդ կռիվներում հաղթանակում են ռևոլյուցիոն ուժերը, որի շնորհիվ ծնվում է Բաքվի հերոսական կոմունան՝ առաջին Սովետական իշխանությունը Անդրկովկասում։ Հակառակ ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերի ամենակատաղի դիմադրության, իր գոյության կարճ ժամանակամիջոցում (1918 թ. ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ը) Բաքվի կոմունան խոշոր գործ կատարեց։

Ոգևորված Բաքվի պրոլետարիատի հերոսական պայքարով ու հաղթանակով, Հայաստանի ու Վրաստանի բանվորներն ու գյուղացիները ծավալուն պայքար են սկսում դաշնակների ու մենշևիկների տիրապետության դեմ։

Այդ պայքարում գնալով ավելի ու ավելի է ուժեղանում բոլշևիկների ազդեցությունը մասսաների վրա։ Աճում է բոլշևիկների ազդեցությունը նաև բանակում։ Բանակի շատ մարտիկներ, նույնիսկ առանձին զորամասեր, գնում են բոլշևիկների հետևից։ Հազարավոր ու տասնյակ հազարավոր աշխատավորներ, որոնք հակառակ իրենց կամքի բշվել էին բանակ, անցնում են ռևոլյուցիոն բանվոր դասակարգի ու գյուղացիության կողմը։

Մյուս կողմից դաշնակների բանակում չտեսնված չափերի է հասնում դասալքությունը։ Դաշնակների կառավարության Մինիստրների խորհուրդը 1918 թ. օգոստոսից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակամիջոցում երեք անգամ իր նիստերում քննության է առնում բանակում ծավալվող դասալքության

[1] Տե՛ս Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1948, էջ 363։

հարցը։ Սակայն ոչ ճնշումները, ոչ բանտն ու աքսորը և ոչ էլ մահապատիժները չօգնեցին դաշնակներին՝ թեկուզ չնչին չափով կանխելու դասալքությունը։ 1919 թ. դեկտեմբերի 19-ին Մինիստրների խորհրդի նախագահին ուղղած իր զեկուցագրում ներքին գործերի մինիստրը խուճապահար հաղորդում է, որ 1919 թ. հունվարից մինչև նոյեմբերը դասալիքների թիվը հասել է 17.6665 հոգու։ Պետք է ենթադրել, որ այդ թվերը լրիվ չեն և բավական պակասեցված են։

Դաշնակների տիրապետության առաջին իսկ օրերից այդ տիրապետության դեմ Հայաստանի տարբեր քաղաքներում ու գավառներում բոլշևիկների ղեկավարությամբ տեղի են ունենում բանվորների, զինվորների ու գյուղացիների մի շարք ելույթներ, որոնք հաճախ վեր են ածվում զինված ընդհարումների։

1918 թ. վերջերին Դիլիջանի շրջանի Միխայիլովկա գյուղում կանգնած էր դաշնակցության բանակի 6-րդ գունդը։ Գնդի հրամանատարությունը, սպանները և զինվորների ռեակցիոն մասը բացարձակ կերպով կողոպտում էին գյուղացիներին։ Գյուղացիներն սկսում են կազմակերպվել՝ նպատակ ունենալով զենքով պաշտպանվել դաշնակցական թալանչիներից։ Անհանգստանալով նախապատրաստվող այդ ելույթներից, դաշնակցական բանակի գեներալ Բաղդասարյանը 1919 թ. հունվարի 10-ին Դիլիջանից Երևան՝ դիվիզիայի պետին հեռագրում է հետևյալը. «Միխայիլովկա գյուղի բնակիչները որոշել են զենքով դիմադրել իշխանությանը։ 14-ին այդ շրջանն եմ ուղարկելու մեկ գումարտակ և երկու հրանոթ։ Խնդրում եմ գործուղել զինվորական քննիչ»[2]։

Այդ դեպքերի կապակցությամբ Դիլիջանի գավառային կոմիսարը հատուկ ներկայացուցիչ է ուղարկում Միխայիլովկա գյուղը, որը, տեղում ծանոթանալով դրությանը, շտապում է զեկուցել իր պետերին։ Զեկուցագրում վերջինս նշում է, որ Միխայիլովկա գյուղում զինված գյուղացիների քանակը հասնում է 400-ի, որ ամեն օր կատարվում է ռազմական ուսուցում, ըստ որում առաջարկ է արված շրջակա գյուղերին՝ պաշտպանելու այդ զինված ելույթը և օգնելու զինամթերքներով։ Դաշնակցական կոմիսարը Միխայիլովկա գյուղի մասին իր զեկուցագիրն ավարտում է հետևյալ խոսքերով. «Նման ուղղությունը իր ընդհանուր բարդություններով, արագ և եռանդուն միջոցներ ձեռք չառնելու դեպքում, կարող է ստեղծել ուժեղ անարխիա հիշյալ շրջանում»[3]։ Ձեռք առնելով բոլոր միջոցները, դաշնակներին հաջողվում է Միխայիլովկա գյուղում նախապատրաստվող զինված ելույթի փորձը ճնշել։

1919 թ. փետրվարի վերջերին Նոր Բայազետի գավառի Զոդ գյուղում զինված ընդհարում է տեղի ունենում գյուղացիների և դաշնակցական զորքերի միջև, որի ընթացքում հայ և ադրբեջանցի գյուղացիները միանալով, սպանում են դաշնակների հեծյալ դիվիզիոնի 3 սպաների և 57 զինվորների։ Այդ զինված ընդհարումը բավական լուրջ բնույթ է կրում։ Դաշնակների կառավարության Մինիստրների խորհուրդը իր նիստում լսում է ներքին գործերի մինիստրի տեղակալի զեկուցումը Զոդի դեպքերի մասին և որոշում արտակարգ քննիչ հանձնաժողով ուղարկել տեղում հայտնաբերելու և խստորեն պատժելու հանցավորներին։ Հանձնաժողովը, մեկնելով Զոդ, հանդիպում է ապստամբ գյուղացիների դիմադրությանը և հնարավորություն չի ունենում սկսելու իր աշխա-

[1] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 67/199, գ. 29, թ. 346—347։
[2] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. 242, թ. 9։
[3] Տե՛ս նույն տեղում, թերթ 13։

տանքները։ Մարտի 17-ին Մինիստրների Խորհուրդը որոշում է պատժիչ զորամաս ուղարկել Զոդ գյուղը։

Գյուղացիական ելույթները ծավալվում են Նոր Բայազետի գավառի նաև մյուս գյուղերում, որի հետևանքով դաշնակների կառավարությունը լիազորում է զինվորական մինիստրին Նոր Բայազետի գավառում հիմնել ռազմա-դաշտային դատարաններ՝ ամենակատաղի պատաստան տեսնելու համար ռևոլյուցիոն գյուղացիների հետ։

Մոբիլիզացնելով մեծ ուժեր և գործադրելով բոլոր միջոցները, դաշնակները ճնշում են զինված ելույթները Զոդում և Նոր Բայազետի գավառի մյուս գյուղերում։

Հայաստանի տարբեր գավառներում գյուղացիների զինված ելույթները դաշնակների տիրապետության դեմ ավելի լայն չափեր են ընդունում 1919 թ. ամռանը։ Այդ ելույթների հետևանքով այնքան լուրջ սպառնալիք է ստեղծվում, որ դաշնակցական կառավարության Մինիստրների Խորհուրդը 1919 թ. հուլիսի 27-ի նիստում լսում է հատուկ զեկուցում Հայաստանի «մի քանի վայրերում (անունները չի հիշատակված — Ա. Հ.) ծագած ապստամբությունների դեմ միջոցներ ձեռք առնելու մասին»։ Հետաքրքրական է այն փաստը, որ դաշնակները մեծ վախ զգալով այդ ելույթներից և վստահ չլինելով իրենց զինված ուժերի նկատմամբ, զեկուցման առթիվ ընդունած մի շարք միջոցառումների շարքում, որոշում են արտակարգ զորահավաք կատարել[1] և ճնշել գյուղացիական ելույթները Հայաստանի տարբեր գավառներում՝ Նոր Բայազետում, Զանգեզուրում, Դիլիջանում և այլն։

1920 թ. հունվարին Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական) տեղի է ունենում երկաթուղային բանվորների գործադուլ, որը վեր է աճվում դեմոնստրացիայի և զինված ընդհարումների դաշնակցական բանդաների հետ։

Սակայն Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը հանուն Սովետական իշխանության ավելի լայն ծավալ և նոր թափ ստացավ 1920 թ. գարնանը։

1919 թ. վերջերին, 1920 թ. առաջին ամիսներին Ռուսաստանի հարավում և Անդրկովկասում տեղի ունեցան խոշոր իրադարձություններ, որոնք մեծ չափով նպաստեցին ռևոլյուցիոն շարժման էլ ավելի ծավալմանը Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում։ Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակի հուժկու հարվածների տակ ջախջախվեց Դենիկինի բանակը և ձախողվեց նրա արշավանքը դեպի Մոսկվա։ Այդ արշավանքին մասնակցում էր նաև դաշնակների կառավարությունը, որը, չնայած իր ծանր վիճակին, Դենիկինին ցույց էր տալիս ամենագործոն օգնությունը։ Բնորոշ է, որ Դենիկինին օգնելու նպատակով դաշնակները հանեցին Կարսի ամրոցի հրանոթները և ուղարկեցին Հյուսիսային Կովկաս՝ Կարմիր Բանակի դեմ։

Դենիկինը իր ջախջախված բանակի մնացորդներով խուճապահար նահանջում էր դեպի հարավ, հետապնդվելով Կարմիր Բանակի կողմից։ 1920 թ. սկզբին ամբողջ Ուկրաինան և Հյուսիսային Կովկասը ազատագրվեցին սպիտակ բանդաներից։

---

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. 242, թերթ 53։
[2] Նույն տեղում, թ. 180։
[3] Տե՛ս Նույն տեղում։

Դենիկինի բանակում դաշնակների կառավարության դիվանագիտական ներկայացուցիչը տագնապալից մի զեկուցագիր է ուղարկում իր կառավարության ղեկավարներին, որով ողբում է Դենիկինի բանակի անհաջողությունները և նախազգուշացնում, որ դա միաժամանակ իրենց անհաջողությունն է, որ պետք է դիմել բոլոր միջոցներին՝ փրկելու իրենց տիրապետությունը։ Դաշնակցական գործիչը առանձնապես մեծ սարսափով է խոսում բոլշևիկյան ագիտացիայի մասին։

Զեկուցագրում ասված է.

«Իմացել եմ, որ բոլշևիկյան հայտնի գործիչ Մյասնիկյանը, մեկնելով Թիֆլիս, ճանապարհին եղել է Նովորոսիյսկում*, կարող է գալ նաև Երևան։ Մեր հայրենիքի համար մեծ դժբախտություն կլիներ, եթե նա երևար Հայաստանում և զբաղվեր ագիտացիայով։ Ձեռք առեք բոլոր միջոցները, որպեսզի նրան թույլ չտալ մեզ վնասներ պատճառի։... Այնպիսի ագիտատորի ներկայությունը, ինչպիսին Մյասնիկյանն է, որը, հավանական է, եկել է մեծ գումարով, պրոպագանդայի հաճար, մեզ համար կարող է շատ վտանգավոր լինել»[1]։

Ջախջախելով Դենիկինի զորքերը, հերոսական Կարմիր Բանակը մոտենում է Անդրկովկասի դռներին։ Այդ ավելի է ոգևորում Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի բանվորներին ու գյուղացիներին, որոնք բոլշևիկների ղեկավարությամբ շարունակում էին պայքարը հանուն սովետական կարգերի։ Այդ պայքարում նրանք մենակ չէին։ Նրանց անշահախնդիր եղբայրական օգնություն էր ցույց տալիս Սովետական Ռուսաստանը։ 1920 թ. մարտի 17-ին Ս. Օրջոնիկիձեի անունով ուղարկված հեռագրում Վ. Ի. Լենինը գրում է, որ Կարմիր Բանակը պետք է օգնություն ցույց տա Ադրբեջանի աշխատավորությանը[2]։

Վ. Ի. Լենինի ցուցումների հիման վրա, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը և Ա. Միկոյանը Ադրբեջանի բոլշևիկների հետ միասին, մշակում են զինված ապըստամբության պլանը և բազմակողմանիորեն նախապատրաստում այն։ Համաձայն այդ պլանի, 1920 թ. ապրիլի 27-ի լույս 28-ի գիշերը տեղի է ունենում Բաքվի պրոլետարիատի զինված ելույթը ընդդեմ մուսավաթիստների իշխանության։ Ապստամբությունը ծավալվում է մեծ արագությամբ և ավարտվում հաղթանակով։ Ադրբեջանում հաստատվում են սովետական կարգեր։

Կարմիր Բանակի հաղթանակները Ռուսաստանի հարավում և սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում ավելի ու ավելի են ոգևորում Հայաստանի բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը։ Հայաստանում լայն ծավալ է ստանում ռևոլյուցիոն մասսայական շարժումը, որը առանձին գավառների ու քաղաքների շրջանակներից դուրս գալով, ընդգրկում է համարյա ամբողջ երկիրը։ Այդ 1920 թ. մայիսյան փառապանծ ապստամբությունն էր։

1920 թ. Մայիսի 1-ի տոնակատարությունը Հայաստանի բոլոր խոշոր կենտրոններում անցավ բոլշևիկների ղեկավարությամբ և նրանց լոզունգներով։ Զինված ապստամբությունը ղեկավարելու համար մայիսի 7-ին կազմակերպվում է Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտե, որը գտնվում էր Ալեքսան-

* Ա. Մյասնիկյանը այդ ժամանակ Նովորոսիյսկում չի եղել և Թիֆլիս չի մեկնել, ըստ երևույթին դաշնակցական գործչի տվյալները ստույգ չեն եղել։ Սակայն այդ ցույց է տալիս, թե դաշնակները որքան սարսափ էին զգում բոլշևիկյան ճշմարտացի ագիտացիայից։

1 ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 685/200, գ. 313, թ. 2։

2 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 480։

դրապոլում։ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի կազմի մեջ էին Ս. Մուսայելյանը, Ա. Նուրիջանյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Մելքոնյանը, Պ. Պետրոսյանը, Գ. Սարգսյանը, Լ. Ուլիբեկյանը և Ա. Տեր-Սահակյանը։

Մայիսի 10-ին Ալեքսանդրապոլի բանվորները Ս. Մուսայելյանի, Բ. Ղարիբջանյանի և Ե. Սեյանի ղեկավարությամբ սկսեցին զինված ապստամբությունը։ Ալեքսանդրապոլում հաստատվեց Սովետական իշխանություն։ Շուտով դաշնակներն իրենց գլխավոր ուժերը խմբապետ Սեպուհի ղեկավարությամբ ուղղեցին Ալեքսանդրապոլի վրա։ Մայիսի 11-ից մինչև 13-ը տեղի են ունենում անհավասար ու կատաղի մարտեր. 14-ին ապստամբությունն արդեն ճնշված էր։

Ընդդեմ դաշնակների զինված ապստամբություններ են տեղի ունենում նաև Հայաստանի մյուս քաղաքներում ու շրջաններում։ Կարսում ապստամբության գլուխ էր կանգնած կրակոտ ռևոլյուցիոներ Ղ. Ղուկասյանը։ Այստեղ մայիսի 11-ից 13-ը ապստամբները իշխանությունը նույնպես իրենց ձեռքն են վերցնում, բայց կարված լինելով մյուս շրջաններից և չստանալով օգնություն, չեն կարողանում պահել իշխանությունը։ Նույնպիսի ապստամբություններ են տեղի ունենում Սարիղամիշում՝ մայիսի 11-ից—18-ը։ Այստեղ Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի նախագահն էր Ա. Ճուղուրյանը. Նոր Բայազետում ապստամբությունը տեղի է ունենում մայիսի 13-ից 19-ը՝ Հ. Սարուխանյանի ղեկավարությամբ։ Ծավալվում է մայիսի 20-ից Զանգեզուրում սկսված ապստամբությունը և մի քանի օրում Սովետական իշխանություն է հաստատվում ամբողջ Զանգեզուրում։ Զանգեզուրում ապստամբությունը ղեկավարում էին Հ. Կամարին (Բեջանյան), Բ. Հարությունյանը, Խ. Մկրտչյանը և ուրիշներ։ Սակայն կատաղի կռիվներից հետո դաշնակներին հաջողվում է մայիսի վերջերին այդ ապստամբությունը ևս ճնշել։

Համարյա բոլոր վայրերում ապստամբություններին ամենաակտիվ կերպով մասնակցում են զինվորները, որը առանձնապես ցայտուն կերպով արտահայտվել է Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և Նոր Բայազետում։

Մայիսյան օրերին զինված ապստամբության փորձեր են լինում նաև Ղարաքիլիսայում (այժմ Կիրովական), Կաղզվանում, Իգդիրում և այլ վայրերում։

Քարվանսարայի (այժմ Իջևան) և Շամշադինի շրջաններում ապստամբությունը սկսվեց մայիսի 18-ին։ Գրավելով այդ շրջանները և առաջ շարժվելով, ապստամբները մայիսի 22-ին իրենց ձեռքն են վերցնում Դիլիջանը, այնտեղ հաստատելով Սովետական իշխանություն, որը գոյություն է ունենում մինչև մայիսի վերջերը։ Այստեղ զինված ապստամբությունը ղեկավարում էր Դիլիջանի գավառի Ռևկոմը, որի կազմի մեջ մտնում էին Շ. Ամիրխանյանը, Ա. Շամտիյանը, Ե. Մկրտումյանը և ուրիշներ։ Շուտով դաշնակցական բանդաները տեղացնում են հարձակման։ Տեղի են ունենում կատաղի կռիվներ, որոնց ընթացքում դաշնակները այդ շրջանում նույնպես վերականգնում են իրենց իշխանությունը։ Ապստամբների մի մասը, թողնելով Հայաստանը, անցնում են Սովետական Ադրբեջան։

Մայիսյան ապստամբությունը, որն ընդգրկեց ամբողջ երկիրը, փայլուն կերպով ապացուցեց Ռուսաստանի ծայրամասերից մեկի՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների դաշինքի ուժը։

Մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո Հայաստանի բոլոր գավառներում ու շրջաններում դաշնակներն սկսեցին կատաղի հարձակում բոլշևիկյան կազմակերպությունների և նրանց հետևից գնացող ռևոլյուցիոն մասսաների վրա։ Ապստամբության օրերին և նրանից հետո դաշնակ խմբապետների ձեռքով սպանվում են ապստամբության ղեկավարներ Ղ. Ղուկասյանը, Ս. Ալավերդյանը, Բ. Ղարիբջանյանը, Հ. Սարուխանյանը, Ս. Մուսայելյանը, Ե. Սևյանը, Ա. Ճուղուրյանը, Բ. Բատիկյանը, Վ. Ալեքսևը և շատ ուրիշներ։

Երկրում ավելի դաժան ու տեռորիստական ռեժիմ հաստատելու գործում դաշնակները մեծ օգնություն են ստանում ամերիկյան և անգլո-ֆրանսիական իմպերիալիստներից։ Դեռևս ապստամբության նախօրյակին դենիկինյան բանակում դաշնակցական կառավարության ներկայացուցիչը 1920 թ. ապրիլի 27-ին դիմում է նույն բանակում անգլիական կառավարության ներկայացուցիչ գեներալ Պերսին, խնդրելով Անգլիայի օգնությունը։ «Քանի դեռ Հայաստանը չի անջատված (այսինքն՝ քանի դեռ դաշնակների տիրապետությունը չի տապալված—Ա. Հ.),—ասված է դիմումի մեջ,— պետք է փոխադրել այնտեղ զենքեր, արկեր, զինապաշար, տեխնիկական միջոցներ և հագուստ, այն հաշվով, որ նա բավարարի մինիմում 60 հազարանոց, մաքսիմում 100 հազարանոց բանակի....

Բոլշևիզմի ալիքը անարգելք կերպով տարածվում է ամբողջ Արևելքում»[1]— խուճապահար վերջացնում է իր դիմումը դաշնակների կառավարության ներկայացուցիչը։

Դրան որպես պատասխան, Անտանտայի պետությունները նույն թվականի հունիսին ռազմական մեծ օգնություն են ցույց տալիս դաշնակներին, որպեսզի վերջիններս ճնշեն ռևոլյուցիոն շարժումները և պահպանեն իրենց իշխանությունը։ Անգլիան հատկացնում է 40 հազար հոգու սպառազինությունն ապահովելու համար բոլոր զենքերն ու այլ միջոցները, Ֆրանսիան տրամադրում է 10 հազար հրացան, 10 միլիոն փամփուշտ, Հունաստանը խոստանում է տալ 10 հազար հրացան, 4 միլիոն փամփուշտ և այլն[2]։

Իր գոյության երկու և կես տարիների ընթացքում դաշնակների կառավարությունը միայն անգլո-ամերիկյան իմպերիալիստներից ֆինանսական օգնություն է ստացել 17,4 միլիոն դոլլար, որից 13 միլիոնը ԱՄՆ-ից, 4,4 միլիոնը Անգլիայից[3]։ Անգլո-ամերիկյան իմպերիալիստները, պարտքի անվան տակ այդպիսի գումարներ տրամադրելով դաշնակներին, ինչպես նաև մենշևիկներին ու մուսավաթիստներին, վերջիններիս օգտագործելով որպես իրենց կամակատարները, նպատակ էին դրել ամրացնել իրենց դիրքերը Անդրկովկասում, այն դարձնել իրենց գաղութը և օգտագործել որպես նոր արշավանքի բազա ընդդեմ Սովետական Ռուսաստանի։

Թևավորված իրենց ժամանակավոր հաջողություններից, դաշնակները Մայիսյան ապստամբության ճնշումից հետո ամենուրեք սկսում են դատաստան տեսնել Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների և ռևոլյուցիոն մասսաների հետ։ Սակայն այդ երկար չտևեց։ Նրանց չհաջողվեց խեղդել Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը, թուլացնել

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. 453, թ. 25։
[2] Նույն տեղում, թերթ 66.
[3] «Խորհրդային Հայաստան, 1920—1923 թթ.», Ժողովածու, Երևան, 1926, էջ 3։

կամ ոչնչացնել վերջիններիս դաշինքը Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ։

1920 թ. հուլիսին Զանգեզուրի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների ղեկավարությամբ նորից են բարձրացնում ապստամբության դրոշը հանուն սովետական կարգերի։ Ապստամբությունը սկսվում է Ղափանում և Շիկահող գյուղում։ Նուտով այն ծավալվում է ամբողջ Զանգեզուրում։ Տապալելով դաշնակների տիրապետությունը և Զանգեզուրից դուրս շպրտելով Նժդեհի ու Դրոյի հրոսակախմբերը, ապստամբները Գորիսի, Ղափանի և Սիսիանի շրջաններում հաստատում են Սովետական իշխանություն, որը գոյություն է ունենում մինչև նույն թվականի հոկտեմբեր ամիսը։ Սակայն, օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ դաշնակներին հաջողվում է վերականգնել իրենց իշխանությունը։

Նման ծանր պայմաններում Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիան իր շուրջն էր համախմբում երկրի ռևոլյուցիոն ուժերը և նրանց նախապատրաստում հետագա նոր մարտերի։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի 1920 թ. հոկտեմբերին Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին ուղղված կոչերից մեկում ասված է.

«Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովին ու դասակարգային դիտակցությանը՝ կազմակերպվելու Կոմունիստական կուսակցության դրոշի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերը, որպեսզի ձեռք-ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ, միահամուռ խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշը Հայաստանում։

Կեցցե Խորհրդային Հայաստանը»[1]։

Համախմբվելով բոլշևիկների շուրջը, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները նախապատրաստվում էին նոր, վճռական գոտեմարտերի։

Դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով ղնալով ավելի ու ավելի էր բարդանում երկրի ներքին ու արտաքին վիճակը։ Այդ առանձնակի սրությամբ արտահայտվեց 1920 թ. աշնանը։

Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում իրենց իմպերիալիստական նպատակները իրագործելու համար Անտանտայի իմպերիալիստները Անդրկովկասում հրահրում էին նոր պատերազմ։ Այդ գործում հարմար գործիք էր նրանց ձեռքում դաշնակների մարիոնետային կառավարությունը։ Անտանտայի իմպերիալիստները, ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը,— դաշնակներին գրգռեցին Թուրքերի դեմ, հրահրեցին հայ-թուրքական պատերազմը և դաշնակները Հայաստանը խայտառակ կերպով լրեցին, Թողնելով Թուրքիայի հոշոտմանը։

Սկսելով պատերազմը, թուրքական զավթիչները ևս իրենց հերթին շտապում էին իրականացնելու սեփական նվաճողական պլանները Հայաստանի ու Անդրկովկասի նկատմամբ։

Պատերազմի առաջին իսկ օրերից դաշնակների զինված ուժերը կրեցին խոշոր պարտություններ։ Առաջ շարժվելով, թնամական զորքերը բարբարոսաբար ավերում էին գավթված տերիտորիայի քաղաքներն ու գյուղերը, հափշտա-

[1] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 1, գործ 4, թերթ 23—24։

կում ու թալանում էին ժողովրդին ու երկրի նյութական հարստությունները, գազանային ատելությամբ ոչնչացնում հայ բնակչությանը։

Հոկտեմբերի 30-ին թուրքական զորքերը գրավում են Կարսը, նոյեմբերի սկզբին նրանք արդեն մոտենում էին Ալեքսանդրապոլին, որը զավթում են նոյեմբերի 7-ին։ Նոյեմբերի կեսերին Սարիղամիշը, Կարսը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլը իրենց գավառներով գտնվում էին թուրքական զավթիչների ձեռքում։

Հայաստանի մնացած տերիտորիան լցված էր հարյուր հազարավոր գաղթականներով։ Մոլեգնում էին սովն ու համաճարակը։ Ամեն օր սովից ու հիվանդություններից մահանում էին հազարավոր աշխատավորներ։

Օրհասական վիճակ էր ստեղծված հայ ժողովրդի համար։ Բազմադարյան պատմություն ունեցող հայ ժողովուրդը կանգնած էր կործանման սահմանի վտանգի առաջ։

Անգլիայի, Ամերիկայի, Ֆրանսիայի հրահրումով սկսված հայ-թուրքական պատերազմը հայ ժողովրդի համար իր ծանր հետևանքներից բացի, միաժամանակ պատերազմի վտանգ էր ստեղծել նաև Սովետական Ռուսաստանի համար։ Խոսելով այդ մասին, 1920 թ. նոյեմբերի 20-ին Վ. Ի. Լենինը նշում է.

«...Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որ վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ որում մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույնիսկ օրավուր։ Սակայն այդ պատերազմը, Լեհաստանի հետ գրեթե ապահովված հաշտության պայմաններում և Վրանգելի լիակատար լիկվիդացիայի պայմաններում, չի կարող շատ սարսափելի լինել, իսկ եթե մեր վզին պատերազմ փաթաթեն, ապա դա մեզ խոստանում է է՛լ ավելի ուժեղացում և մեր դրության ամրացում, քան առաջ։ Թերթերի հաղորդագրություններն այն մասին, թե ի՛նչ է կատարվում Հայաստանում, Թուրքիայում, որոշ պատկերացում են տալիս մեզ այդ մասին։ Ստեղծվում է չափազանց խճճված դրություն, բայց ես միանգամայն վստահ եմ, որ այդ դրությունից մենք դուրս կգանք, կամ պահպանելով հաշտությունն այժմյան հիման վրա և, անշուշտ, մեզ համար որոշ տեսակետներից շատ ձեռնտու հիման վրա՝ մեզ բավարարող, տնտեսական գոյության հնարավորություն տվող հիման վրա։ Եվ դրա վրա ենք մենք գործադրում բոլոր ջանքերը։ Սակայն հնարավոր է, որ հանգամանքներն ուղղակի մեր վզին պատերազմ փաթաթեն կամ անուղղակի կերպով հասցնեն դրան։ Մենք կարող ենք դրա վրա միանգամայն հանգիստ նայել — դա կլինի պատերազմ հեռավոր ծայրամասում, ըստ որում մեր կողմը կլինի ուժերի լիակատար գերակշռությունը, որը կապահովի, հավանորեն, նույնիսկ ավելի մեծ շահում, քան այն, որ ստացվեց լեհական պատերազմից»[1]։

Սակայն Սովետական Ռուսաստանի կառավարության իմաստուն քաղաքականության շնորհիվ պատերազմի այդպիսի վտանգը կանխվում է։

Դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով 1920 թ. վերջերին հայ ժողովրդի համար ստեղծված այդ ծանր վիճակը չվրիպեց Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի, նրա մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի ուշադրությունից։ 1920 թ. նոյեմբերի 9-ին Բաքվում հրավիրվում է Ռ.Կ.(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի միացյալ նիստ, որը, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցում-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 320։

ներով, անհրաժեշտ համարեց ամեն կերպ օգնել Հայաստանի ռևոլյուցիոն մասսաներին և երկիրը փրկել վերահաս կործանումից։

Մոբիլիզացնելով բոլոր ուժերն ու հնարավորությունները, Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունները և աշխատավորները նոր թափով շարունակում էին պայքարը հանուն Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի Հայաստանում։ Այդ պայքարն իր բարձրագույն աստիճանին է հասնում 1920 թ. նոյեմբերին։ Այդ ժամանակ Նոր Բայազետի, Ղափանի, Դիլիջանի, Շամշադինի, Էջմիածնի, Աշտարակի և այլ գավառներում ու շրջաններում մեկ կողմից բանվորների ու գյուղացիների, մյուս կողմից դաշնակցական բանդաների միջև տեղի են ունենում զինված ընդհարումներ։ Ռևոլյուցիոն մասսաները, բոլշևիկների ղեկավարությամբ, անհաշտ պայքար մղելով դաշնակների տիրապետության դեմ, հաստատ համոզված էին, որ միայն այդ տիրապետության կործանումով և սովետական կարգերի հաստատումով հնարավոր կլինի ձեռք բերել ազատություն ու անկախություն և երկիրը փրկել վերահաս կործանումից։

Նրանք միաժամանակ համոզված էին, որ այդ հնարավոր է իրականացնել միայն ռուս մեծ ժողովրդի, նրա հերոսական բանակի օգնությամբ։ Հայ ժողովուրդը համոզված էր, որ անհրաժեշտ օգնություն կստանա ինչպես ռուս ժողովրդից, նույնպես և Անդրկովկասի եղբայրական ժողովուրդներից և հաղթանակը մինչև վերջ կհասցնի։

Դաշնակները հույս ունեին փրկվել կործանումից օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ։ Դրան հասնելու համար նրանք նույնիսկ ընդունեցին թուրքական օրիենտացիա։ Այդ օրերին դաշնակների «Հառաջ» թերթուկը գրում էր. «Իր փրկության համար հայ ժողովուրդը ունի միայն մեկ ճանապարհ — գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարևանի՝ Թուրքիայի հետ։ Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն,— նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»[1]։ Նույն թերթուկը իր մի այլ համարում գրում էր. «Այդպիսի մի ուժ, որն անխուսափելիորեն պիտի հենարան դառնա հակաբոլշևիկյան տարրերի համար՝ տապալելու Ադրբեջանում Սովետական իշխանությունը,— անտարակույս կլինեն տաճկական այն զորքերը, որոնք ձգտում են այսօր Հայաստանի վրայով մտնել Ադրբեջան»[2]։

Այսպիսով, հայ ժողովրդի այդ արդահատելի թշնամիները հույս ունեին Թուրքիայի օգնությամբ ճնշել ռևոլյուցիոն շարժումը Հայաստանում և տապալել սովետական կարգերը Ադրբեջանում։

Սակայն այդ ստորությունը ևս չփրկեց նրանց։

Գնալով Սովետական իշխանության համար մղվող պայքարը երկրում ավելի ու ավելի լայն ծավալ էր ստանում, որն իր բարձրագույն աստիճանին հասավ 1920 թ. նոյեմբերի վերջերին։ Այս անգամ զինված ապստամբության կենտրոնը Քարվանսարայի (այժմ Իջևան) շրջանն էր։ Այստեղ էին կենտրոնացված ռևոլյուցիոն գլխավոր ուժերը և ապստամբության շտաբը։ Զինված ապստամբությունն սկսվեց նոյեմբերի 29-ին. նույն օրը ապստամբ բանվորներն ու գյուղացիները Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիա-

[1] «Հառաջ», 1920, № 255։
[2] Նույն տեղում, № 229։

յի ղեկավարությամբ տապալեցին օտարերկրյա իմպերիալիստների հլու կամակատար դաշնակների արյունոտ իշխանությունը։

Նոյեմբերի 29-ին Քարվանսարայում կազմակերպվում է Հայաստանի Ռևոլյուցիոն Կոմիտե (Ռևկոմ), որի կազմում մտնում էին Ս. Կասյանը (նախագահ), Ս. Տեր-Գարրիելյանը, Ա. Մռավյանը, Ա. Բեկզադյանը, Ի. Դովլաթյանը և Ա. Նուրիջանյանը։ Ռևկոմը նույն օրը հրապարակում է իր Դեկլարացիան՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու մասին։ Դեկլարացիայում ասված է.

«Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ՝ Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Այսօրվանից Խորհրդային Հայաստանի Կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»[1]։

Նոյեմբերի 30-ին Հայաստանի նորակազմ Ռևկոմը հեռագրով դիմում է ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ Վ. Ի. Լենինին, ողջունելով նրան և խնդրելով Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։

Վ. Ի. Լենինի ցուցումներով հերոսական 11-րդ Կարմիր Բանակի զորամասերը օգնության են հասնում ապստամբներին։ Առաջ շարժվելով, ապստամբները 11-րդ բանակի զորամասերի հետ միասին դեկտեմբերի 2-ին մտնում են Երևան։ Հայաստանի մայրաքաղաքի վրա բարձրանում է սոցիալիստական ռևոլյուցիայի աղատարար գրոշը։

Այդ նույն օրը, դեկտեմբերի 2-ին, հայ ժողովրդի կատաղի թշնամի դաշնակները, որոնք արդեն զրկված էին իշխանությունից, Թուրքիայի հետ Ալեքսանդրապոլում ապօրինի կերպով կնքում են մի պայմանագիր, որի համաձայն Հայաստանը փաստորեն պետք է անցներ Թուրքիայի պրոտեկտորատի ներքո և զրկվեր բանակ պահելու իրավունքից։ Այդ պայմանագրով դաշնակները Թուրքիային հանձնեցին Կարսի մարզը և Սուրմալուի գավառը։ Այդ իր նմանը չունեցող մի ստոր դավ էր հայ ժողովրդի հանդեպ։ Շուտով Հայաստանի Սովետական իշխանությունը չեղյալ հայտարարեց այդ պայմանագիրը։

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում՝ այդ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակն էր ռուսական ցարիզմի նախկին դաղութում։ Անդունդի և կործանման վտանգի առջև կանգնած հայ ժողովուրդը սովետական կարգերի հաստատումով վերջնականապես փրկվեց կործանումից, ձեռք բերեց իր ազատությունն ու անկախությունը։ Իրակ·անացավ ազատասեր հայ ժողովրդի դարավոր իղձը, սկսվեց նրա պատմության նոր դարաշրջանը, իսկական վերածնությունը։

Հայաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակը ողջունեց սոցիալիստական ռևոլյուցիայի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը։ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի նախագահ Ս. Կասյանի անունով ուղարկած հեռագրում Վ. Ի. Լենինը գրում է.

«Հանձին ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշ-

---

[1] ՀՍՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետական Հրատարակչություն, Էջմիածին, 1921, էջ 1։ Ընդգծումները բնագրինն են։

խատավորական Սովետական Հայաստանին»[1]։ Նույն թվականի դեկտեմբերի 22-ին Սովետների Համառուսաստանյան 8-րդ համագումարում ժողովրդական Կոմիսարների Սովետի գործունեության մասին զեկուցման մեջ, անդրադառնալով Հայաստանում սովետական կարգերի հաստատման փաստին, Վ. Ի. Լենինը ասում է. «Ես պետք է նշեմ նաև, ընկերնե՛ր, որ Արևելքում մեր քաղաքականությունն այս տարվա ընթացքում խոշոր հաջողություններ ունեցավ։ Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների՝ կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ոչ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրին բանվորների ու գյուղացիների ձեռքը»[2]։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը ջերմ արձագանք գտավ եղբայրական բոլոր ժողովուրդների կողմից։

Ջեռք բերելով իրենց ազատությունն ու անկախությունը, Սովետական Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սկսեցին խաղաղ շինարարական աշխատանքները։ Սակայն այդ երկար չտևեց։

Օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ և խրախուսանքով դաշնակ ավանտյուրիստները 1921 թ. փետրվարի 13-ին դիմված ելույթ սկսեցին Հայաստանի Սովետական իշխանության դեմ, նպատակ ունենալով տապալել այն։ Սկսվում են քաղաքացիական կռիվները։

Այդ կռիվների առաջին շրջանում դաշնակցական դիմված բանդաներին հաջողվում է գավթել Սովետական Հայաստանի մի շարք քաղաքներն ու շրջանները՝ Երևանը, Նոր Բայազետը, Էջմիածինը, Ախտայի, Կոտայքի, Աշտարակի, Դարալագյազի և մի շարք այլ շրջաններ։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, նրանց Կարմիր Բանակը ղեկավարը ձեռքին հերոսական պայքարի են դուրս գալիս Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ծնունդ Սովետական իշխանության պաշտպանության համար։ Այդ պայքարում նրանց եղբայրական մեծ օգնություն են ցույց տալիս Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակի զորամասերը, հատկապես 20-րդ դիվիզիան և Անդրկովկասի ժողովուրդները։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության համար պսակվում է հաղթանակով։ 1921 թ. հուլիսի 13-ին դաշնակցական ջախջախված բանդաների մնացորդները դուրս են շպրտվում Հայաստանի սահմաններից։

Ռեսպուբլիկայի աշխատավորները նորից հնարավորություն են ստանում ձեռնամուխ լինելու խաղաղ շինարարական աշխատանքների։

Բանվորների և գյուղացիների դիմված պայքարը ժողովրդի թշնամի դաշնակների դեմ ղեկավարում էին Հայաստանի Կոմունիստական պարտիան, նրա այնպիսի արժանավոր գործիչները, ինչպիսիք էին Ալ. Մյասնիկյանը, Գ. Ա.Թարրեկյանը և ուրիշներ։ Կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները այդ կռիվներում տվեցին բազմաթիվ հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհեցին Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի ծնունդ Սովետական իշխանության պաշտպանության, հայ ժողովրդի ազատության ու անկախության համար։ Այդ հերոսների թվում են՝ Հայկական 1-ին հրաձիգ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 550։
[2] Նույն տեղում, էջ 610։

բրիգադայի զինվորական կոմիսար Լ. Միշյանը, Հայկական 2-րդ բրիգադայի հրամանատար Երմոլենկոն, Հայկական 2-րդ հրաձիգ գնդի հրամանատար Ֆիշիլևիչը, վաշտի հրամանատար Ռ. Պողոսյանը, զինվորական կոմիսար Ն. Ոլբեցյանը, շարքային մարտիկներ Ս. Դարբինյանը, Գ. Զախոյանը, Հ. Խաչատրյանը, Ա. Ղարիբյանը և շատ ուրիշներ։

Ձեռք բերելով իր աղատությունն ու անկախությունը, հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ սովետական մյուս ժողովուրդների հետ միասին, ռուս մեծ ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնությամբ, ձեռնամուխ լինելու նոր, սոցիալիստական հասարակարգի կառուցման պատմական գործին։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 40-րդ տարեդարձը Սովետական Հայաստանի աշխատավորները, ՍՍՌՄ-ի բոլոր աշխատավորների հետ միասին, դիմավորում են պատմական խոշորագույն հաղթանակներով։

Հետևողականորեն իրականացնելով ժողովուրդների իրավահավասարության և եղբայրական համագործակցության սկզբունքը, Կոմունիստական պարտիան խնդիր դրեց ամենակարճ ժամանակամիջոցում հասնել Սովետական Միության ժողովուրդների փաստական հավասարությանը տնտեսական, քաղաքական և կուլտուրական բնագավառներում։ Այդ քաղաքականության անշեղ իրականացման շնորհիվ, սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին, բուռն զարգացում է ապրել նաև Սովետական Հայաստանը։

Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում վերածնված Հայաստանի աշխատավորները մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղան քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման դժվարին գործին, որը ավարտեցին հաջողությամբ։

Ռեսպուբլիկայում սոցիալիստական շինարարությունն ավելի լայն ծավալ ընդունեց նախապատերազմյան հնգամյակների տարիներին։ 1928—1940 թթ. Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքն աճել է 15 անգամ, իսկ 1913 թ. համեմատությամբ՝ 21,5 անգամ։ Այդպիսի արագ զարգացումը ռեսպուբլիկայում ապահովեց սոցիալիստական արդյունաբերության տեսակարար կշռի անշեղ բարձրացումը արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ, որը 1928 թ. 28,1 տոկոսից 1940 թ. հասել էր 80,7 տոկոսի[1]։ Ռեսպուբլիկայի սոցիալիստական արդյունաբերության այդպիսի զարգացումը տեղի է ունեցել գյուղատնտեսության վերելքին զուգընթաց։

Երկրի ինդուստրացման քաղաքականության անշեղ կենսագործման հիման վրա ինչպես ամբողջ Սովետական Միությունում, նույնպես և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանում իրականացավ ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը։ Անհրաժեշտ նյութական նախադրյալներ ստեղծվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար, ապահովվեց սոցիալիզմի հաղթանակը նաև գյուղում։

---

[1] Социалистическое строительство Армянской ССР (1920—1940). Ереван, 1940, стр. 19.

ԱԿԱԴԵՄԻԱ

Արագ թափով ծավալվեց և առաջ ընթացավ հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։

Սոցիալիստական շինարարության դրծում ձեռք բերած հաղթանակների և երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների շնորհիվ հին, բուրժուական ազգի փլատակների վրա ծագեց ու զարգացավ սոցիալիստական հայ ազգը։

Սովետական իշխանության տարիներին ձևավորվեցին հասարակական բոլորովին նոր դասակարգեր՝ սովետական բանվոր դասակարգը, որն ազատ է կապիտալիստական շահագործումից, սովետական կոլտնտեսային գյուղացիությունը, որը վերջնականապես ազատագրված է բուրժուա-կալվածատիրական ճնշումից ու շահագործումից, սովետական ինտելիգենցիան, որը դուրս է եկել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ծոցից։

Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության հեղեղական կենսագործման շնորհիվ Սովետական Հայաստանը դարձավ Սովետական Միության առաջավոր ռեսպուբլիկաներից մեկը։

1941—1945 թվականների Հայրենական Մեծ պատերազմում մեր երկրի բոլոր ժողովուրդները, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, կանգնեցին թշնամու դեմ, կրծքով պաշտպանելով մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության նվաճումները։ Հայրենական Մեծ պատերազմին իր ակտիվ մասնակցությունը ցուցաբերեց նաև հայ ժողովուրդը, պատվով կատարելով իր պարտքը մեր Մեծ Հայրենիքի հանդեպ։ «Հայրենական պատերազմի տարիներին,— ասված է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ ՍՍՌՄ Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի ողջույնի հեռագրում,— հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնվիրաբար պաշտպանում էին մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»[1]։

Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտումից հետո Հայաստանի բանվորները, կոլտնտեսային գյուղացիությունը և ինտելիգենցիան ձեռնամուխ եղան ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հետպատերազմյան հնգամյա պլանի կենսագործմանը (1946—1950 թթ.)։ Բուռն տեմպով աճեց ու հզորացավ նաև Սովետական Հայաստանի էկոնոմիկան, որը հանդիսանում է Սովետական Միության էկոնոմիկայի բաղկացուցիչ մասը։ Այդ տարիներին ռեսպուբլիկայում կառուցվել և վերակառուցվել են ավելի քան 50 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, աննախընթաց զարգացում են ապրել էլեկտրամեքենաշինությունը, հաստոցաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետաղների մշակությունը, գյուղատնտեսական մեքենաշինությունը և այլն, որոնք ունեն միութենական նշանակություն։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և ինտելիգենցիայի նվիրված ու ստեղծագործական աշխատանքի շնորհիվ ռեսպուբլիկան նոր հաջողությունների հասավ հինգերորդ հնգամյակի տարիներին՝ 1951—1955 թթ.։ Մանր արդյունաբերության զարգացման հետ

[1] «Սովետական Հայաստան», 1945, նոյեմբերի 25։

միասին, հինգերորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում հեռատես վերելք են ապրել թեթև և սննդի արդյունաբերությունը։ Եթե ռեսպուբլիկայի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1940 թ.՝ համեմատությամբ 1950 թ. ավելացել էր 249 տոկոսով, ապա 1955 թ. 471 տոկոսով[1]։

Ռեսպուբլիկայի աշխատավորները, ղեկավարվելով ՍՄԿՊ XX համագումարի որոշումներով և պայքարելով դրանց կենսագործման համար, նոր, ավելի մեծ հաջողությունների են հասել վեցերորդ հնգամյակի առաջին երկու տարիներին՝ 1956 և 1957 թթ.։ 1913 թ. համեմատությամբ, 1956 թ. Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքը ավելացել է 45 անգամ։ Եթե 1913 թ. Հայաստանում արդյունաբերությունը տալիս էր 26 տեսակի արտադրանք, ապա ներկայումս այն տալիս է ավելի քան 400 տեսակի արտադրանք։ Այդ արտադրանքը իրացվում է ոչ միայն Սովետական Միությունում, այլև արտասահմանյան շատ երկրներում։ Միայն Երևանի Լենինի անվան էլեկտրագործարանի արտադրանքը մեծ հաջողությամբ իրացվում է արտասահմանյան 22 երկրներում, այդ թվում Եգիպտոսում, Հնդկաստանում, Արգենտինայում, Լեհաստանում, Թուրքիայում, Հարավսլավիայում և այլ երկրներում։ Ներկայումս ռեսպուբլիկայի էլեկտրակայանները 12 ժամում տալիս են այնքան արտադրանք, որքան տվել են Հայաստանի էլեկտրակայանները ամբողջ 1919 թ. ընթացքում։ Հայկական ՍՍՌ-ում մեկ շնչին հասնում է 76 տոկոսով ավելի էլեկտրաէներգիա, քան Իտալիայում, 80 տոկոս ավելի, քան Ճապոնիայում, 21 անգամ ավելի, քան Թուրքիայում և այլն։

Սովետական իշխանության տարիներին սոցիալիստական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ Սովետական Հայաստանում ստեղծվել են արդյունաբերական այնպիսի խոշոր կենտրոններ, ինչպիսիք են Երևանը, Լենինականը, Կիրովականը, Ալավերդին և Ղափանը։ Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ աշխատում են բարձրագույն կրթությամբ մոտ 30 հազար մասնագետ, որից 6000 ինժեներ, 3400 գյուղատնտես և անասնաբույժ, 3800 բժիշկ և այլն։

Նշանակալից հաջողությունների է հասել Սովետական Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Յանքատարածությունները 1913 թ. 346 հազար հեկտարից 1955 թ. հասել էին 481 հազար հեկտարի[2]։

Ներկայումս Հայաստանում կա 900 կոլտնտեսություն, 48 սովխոզ։ Սոցիալիստական գյուղատնտեսության աշխատավորները ծավալուն պայքար են տանում ՍՄԿՊ XX համագումարի պատմական որոշումները կենսագործելու, մեր ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ եղած թերությունները լիկվիդացնելու, նրա բոլոր ճյուղերում արտադրանքը շեշտակի կերպով բարձրացնելու ուղղությամբ։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Սովետական Հայաստանում ավելի լայն ծավալ ընդունեց ժողովրդական կրթության գործը։ Ռեսպուբլիկայի գյուղական վայրերում հաջողությամբ իրագործվում է յոթնամյա պարտադիր ուսուցումը, իսկ քաղաքներում՝ միջնակարգ պարտադիր ուսուցումը։ Բացի տարրական դպրոցների մասսայական ցանցից, ներկայումս ռեսպուբլիկայում

[1] Народное хозяйство СССР, статистический сборник, Госстатиздат, Москва, 1956, стр. 51.

[2] Народное хозяйство СССР..., стр. 112.

գործում են 620 ոչ լրիվ միջնակարգ և 403 միջնակարգ դպրոցներ, 44 տեխնիկում։

Աննախընթաց վերելք են ապրել հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան ու արվեստը։ Այդ բնագավառում ձեռք բերված հաջողությունների փայլուն ցուցադրումը հանդիսացավ 1956 թ. հունիսին Մոսկվայում տեղի ունեցած Սովետական Հայաստանի արվեստի ու գրականության տասնօրյակը։

Սովետական Հայաստանում լայն զարգացում է ստացել բարձրագույն կրթությունը և գիտա-հետազոտական հաստատությունների ցանցը։ Ռեսպուբլիկայի 12 բարձրագույն դպրոցներում սովորում են մոտ 15 հազար ուսանող։ Սթե նախասովետական շրջանում Հայաստանում չկար ոչ մի գիտա-հետազոտական հաստատություն, ապա ներկայումս դրանց թիվը հասնում է 49-ի, որոնց զգալի մասը գտնվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի սիստեմում։ Որ բեղմնավոր աշխատանքով Գիտությունների ակադեմիան կարևոր գործ է կատարում սովետական առաջավոր գիտության զարգացման ուղղությամբ։ Ակադեմիայի սիստեմում կա 23 գիտական հաստատություն։ Այստեղ աշխատում են ավելի քան 60 ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, 360 դոկտորներ և գիտության թեկնածուներ։

Այդպիսի նվաճումներով է դիմավորում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ծնունդ Սովետական Հայաստանը Մեծ Հոկտեմբերի 40-ամյակը։

Համախմբված Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, սոցիալիստական հայ ազգը, հզոր Սովետական Միության սոցիալիստական ազգերի հետ միասին, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, հաստատ քայլերով առաջ է ընթանում դեպի կոմունիզմ։